ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

МИНИСТР ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

MINISTER OF DEFENCE OF
THE REPUBLIC OF ARMENIA

«02» 04 2015 թ.
ՄՀ/510-477

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ
Դ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հարությունյան

Ի կատարումն ՀՀ վարչապետի 25.03.2015թ. հ/հ 02/12.11/4646-15 հանձնարարականի՝ ՀՀ պաշտպանության նախարարությունում ուսումնասիրվել է «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակում անցկացվող «Բաց կառավարման մրցանակաբաշխության» հայտի պահանջներին համապատասխանող բարեփոխումային ծրագրերի և աշխատանքների ներկայացման հարցը:

Նախ կցանկանայի նշել, որ ՀՀ ՊՆ-ն որոշ ժամանակահատվածով ներգրավված էր «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության աշխատանքներին: Սակայն մասնակից մի շարք ՀԿ-ների առաջարկությամբ ՊՆ-ն դուրս եկավ ծրագրից, քանի որ այնտեղ ակնկալվում էր հստակ նշվող ժամանակահատվածում բաց կառավարման սկզբունքին նպաստող կոնկրետ ծրագրի իրականացում, ինչն իրատեսական չէր ՊՆ պարագայում, քանի որ նախաձեռնությանը ՊՆ ներկայացել էր ՆԱՏՕ-ի հովանու ներքո անցկացվող «Բարեվարքության ամրապնդման» ծրագրի իրականացման համալիր փաթեթով, որը մեկ կոնկրետ նպատակի իրականացման կամ խնդրի լուծման փոխարեն նախատեսում էր պաշտպանության ոլորտի հանրային կառավարման համակարգի համալիր վերանայում, որն ի թիվս այլ սկզբունքների, ենթադրում է նաև գործունեության համապատասխանեցում բաց կառավարման սկզբունքին:

Ելնելով վերոնշյալից՝ առաջարկում ենք հայտում որպես պաշտպանական ոլորտի կառավարման ոլորտում իրականացվող համալիր բարեփոխումային ծրագիր նշել բարեվարքության ամրապնդման նախաձեռնությունը (NATO Building Integrity Initiative), որի շրջանակում իրականացվում է ինքնագնահատման գործընթաց, իսկ միջազգային փորձագետների վերանայումից հետո ներկայացվելիք

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ... Մուտքի թիվ 017-10355 03.04.15

ք.Երևան, 0044, Բագրևանդի 5, Հեռ.(+374) 10 29-44-01, Ֆաքս (+374) 10 29-43-12

Yerevan city, 0044, Bagrevand 5, Phone: (+374) 10 29-44-01, Fax: (+374) 10 29-43-12 г.Ереван, 0044, Багреванда 5, Тел.: (+374) 10 29-44-01, Факс: (+374) 10 29-43-12

առաջարկությունների հիման վրա մշակվելու է Բարեվարքության ամրապնդման պլան-ժամանակացույց:

Ինչ վերաբերում է այս ուղղությամբ կատարված կոնկրետ քայլերին, ապա կարելի է նշել ՀՀ ՊՆ նախաձեռնությամբ մշակված և ներկայումս ԱԺ-ում քննարկման դրված «Զորամասերի և զինվորական հաստատությունների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով նախատեսվում է կարգավորել ՀՀ ՊՆ համակարգի զորամասերի, ռազմաբժշկական, ռազմաուսումնական (ռազմագիտական), մշակութային և լրատվական բնույթի զինվորական հաստատությունների ստեղծման, գործունեության իրականացման, դրանց իրավական վիճակի հետ կապված հարաբերությունները: Մեր կարծիքով, հատկապես ռազմաբժշկական, ռազմաուսումնական (ռազմագիտական), մշակութային կամ լրատվական հաստատությունների մասով օրենքի կարգավորման առարկան անմիջական առնչություն ունի բաց կառավարման միջոցով հանրային ծառայությունների բարելավման հարցերի հետ:

Բացի այդ, ներկայումս պաշտպանական բարեփոխումների շրջանակում դիտարկվում է զինկոմիսարիատների գործունեության վերանայման հարցը, մասնավորապես՝ դրանց կարգավիճակի հստակեցման, հասարակության հետ աշխատանքներում բաց կառավարման մոդելի ներդրման, հնարավորության դեպքում՝ անգամ «մեկ պատուհանի» սկզբունքին անցման տեսանկյունից: Այս հարցերում միջազգային փորձի ուսումնասիրության նպատակով նախատեսվում է ՀՀ ՊՆ պատվիրակության այցը Ավստրիա, որից հետո կդիտարկվի զինկոմիսարիատի նոր մոդելի մշակման և փորձնական գործառնման հնարավորությունը: Մեր կարծիքով այս ծրագրային ուղղությունը ևս կարելի է զետեղել հայտի բովանդակության մեջ:

Անհրաժեշտության դեպքում, պատրաստ ենք աշխատանքային կարգով փորձագիտական օժանդակություն ցուցաբերել ՀՀ հայտի լրացման աշխատանքներին և մանրամասնել վերը նշված ուղղություններով ՀՀ ՊՆ կողմից իրականացվող գործողությունները:

Հարգանքով՝

Ս.ՕՀԱՆՅԱՆ

Կատարող՝ ՀՀ ՊՆ ՊՔՎ, փոխգնդապետ Ա. Ավետիսյան
Հեռ.՝ 010 294529 (2293)